ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/8367/02/24 ք. Երևան
10 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲ ընկերության՝ 05.09.2024թ.-ի «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ բժշկական նշանակության ապրանքների մատակարարման թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-19 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելը և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 16.09.2024թ. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Նարեկ Մանուկյանի կողմից ընդունված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲ ընկերությունից պետք է պահանջել 05.09.2024թ.-ի թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-19 ծածկագրով պայմանագրի և 16.09.2024թ.-ի «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Նարեկ Մանուկյանի կողմից ընդունված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲ ընկերության՝ 05.09.2024թ.-ի «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ բժշկական նշանակության ապրանքների մատակարարման թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-19 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելը և «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 16.09.2024թ. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Նարեկ Մանուկյանի կողմից ընդունված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲ ընկերությունից պահանջել դատարան ներկայացնել 05.09.2024թ.-ի թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-19 ծածկագրով պայմանագրի և 16.09.2024թ.-ի «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Նարեկ Մանուկյանի կողմից ընդունված որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թվականի նոյեմբերի 21-ին:
5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.10.10 16:33:26 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am